ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1
ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի նիստի

20 .09.2014թ. Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/

Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, , Հ. Մարզպանյանը, Հ Ազիզյանը, Գ. Գալստյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյան , ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը:

Օրակարգ

1.Ֆակուլտետի խորհրդի կազմի քննարկման և հաստատման մասին:

/Զեկ.Ն.Խուդավերդյան/

2. 2014 -15 ուս.տարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:

/Զեկ.Ն.Խուդավերդյան/

3. 2014 -15 ուս.տարվա ֆակուլտետի ամբիոնների և դեկանատի խորհրդի աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին:

/Զեկ. Հ. Մարզպանյան, Հ. Ազիզյան/

4.Ընթացիկ հարցեր:

1. ***Լսեցին - Ֆակուլտետի խորհրդի կազմի քննարկման մասին***

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ֆակուլտետի գործող խորհուրդը պետք է հաստատի 2014 -15 ուս. տարվա համար ֆակուլտետի խորհրդի նոր կազմը:

Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի անդամների թեկնածությունները.

1. Ն. Խուդավերդյան	խորհրդի նախագահ
2. Գ. Առուշանյան	քարտուղար
3.Հ. Ազիզյան	«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ
4.Հ. Մարզպանյան	«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ

5.Գ. Գալստյան	«Ընդհանուր տնտեսագիտության » ամբիոնի դոցենտ
6..Գ. Ավետիսյան	«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի ասիսիտենտ, ՄԿՈԱ բաժնի մասնագետ
7.Լ. Ալեքսանյան	ուս. խորհրդի նախագահ
8.Լ. Բլբուլյան	ՈՒԳԸ նախագահ

Արտահայտվեց - Գ. Ավետիսյանը

Նա նշեց, որ համաձայն «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետի» կանոնակարգի պահանջների ֆակուլտետի դեկանն ի պաշտոնե համարվում է նաև ֆակուլտետի խորհրդի նախագահ, իսկ գործավարը՝ քարտուղար: Հետևաբար, նիստում չի իրականացվելու խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի խորհրդի կազմը և ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

2.Լսեցին - 2014 -15 ուս.տարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ժամանակն է ֆակուլտետի խորհուրդի կողմից հաստատվի խորհրդի աշխատանքային պլանը: Աշխատանքային պլանի կազմման նպատակն է կանոնակարգել ֆակուլտետի խորհրդի գործունեությունը, ինչպես նաև հստակորեն ամրագրել այն բոլոր հարցերը, որոնցով պետք է զբաղվի ֆակուլտետի խորհուրդը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում, ինչն էլ իր հերթին կպայմանավորի ամբիոնային աշխատանքների համակարգված կազմակերպումը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի օրակարգերը և ժամանակացույցը, որը բերվում է ստորև

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի 2014 -15 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագիծը.

հհ	Նախատեսվող օրակարգը	Ժամանակացույց
1	1.Քննարկել և հաստատել ֆակուլտետի խորհրդի կազմը 2.Քննարկել և հաստատել ֆակուլտետի խորհրդի 2014 -15 ուս. տարվա աշխատանքային պլանը	20.09.2014թ. (նշված օրակարգը նախատեսել յուրաքանչյուր ուս.

	3.Քննարկել և հաստատել ֆակուլտետի ամբիոնների և դեկանատի խորհրդի 2014 - 15 ուս. տարվա աշխատանքային պլանները Ընթացիկ հարցեր /լսել ֆակուլտետի մասնագիտությունների խորհրդատուների հաշվետվությունները և այլն/	տարում ֆակուլտետի խորհրդի առաջին նիստի համար)
2	1.Լսել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունները 2.Լսել ֆակուլտետի ուս. խորհրդի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունները համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ Ընթացիկ հարցեր	22.11.2014թ. (նշված օրակարգը նախատեսել յուրաքանչյուր ուս. տարում ֆակուլտետի խորհրդի երրորդ նիստի համար)
3	1.Քննարկել ֆակուլտետի 2014 -15 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները/դեկանի հաշվետվություն/ 2.Հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների 2014 -15 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակները Ընթացիկ հարցեր	13.02.2015թ (նշված օրակարգը նախատեսել յուրաքանչյուր ուս. տարում ֆակուլտետի խորհրդի համապատասխան նիստի համար)
4	1.Քննարկել և հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական պլանները, 2.Քննարկել և հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանները 3. Քննարկել և հաստատել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները Ընթացիկ հարցեր /լսել ըստ մասնագիտությունների խորհրդատուների հաշվետվությունները /	04.04.2015թ. (նշված օրակարգը նախատեսել յուրաքանչյուր ուս. տարում ֆակուլտետի խորհրդի համապատասխան նիստի համար)
5	1.Լսել ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը ընթացիկ ուս. տարվա վերաբերյալ (նշված հաշվետվությունում պետք է ներակայցվի 2014 - 2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը / 2. Լսել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունները 3. Լսել ֆակուլտետի ուս. խորհրդի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունները համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ Ընթացիկ հարցեր:	27.06.2015թ (նշված օրակարգը նախատեսել յուրաքանչյուր ուս. տարում ֆակուլտետի խորհրդի համապատասխան նիստի համար)

Որոշեցին – հավանություն տալ և հաստատել ֆակուլտետի խորհրդի 2014 – 15 ուս. տարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը և ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

3.Լսեցին - 2014 -15 ուս.տարվա ֆակուլտետի ամբիոնների և դեկանատի խորհրդի աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին:

«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանը, «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Ազիզյանը ներկայացրին 2014 - 2015 ուս. տարվա համար նախատեսված ամբիոնների աշխատանքային պլանները:

Հ. Մարզպանյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ընթացակարգերն ու գործընթացները, ինչը նպաստում է ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ամբիոնի աշխատանքների ակտիվացման գործին: Այդ աշխատանքը պետք է սկսել 2014 -15 ուս. տարվա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի ճշգրտմամբ: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչը ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացրեց 2014 – 2015 ու. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Ազիզյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ֆակուլտետի ռազմավարական ծրագրի, դասախոսների անհատական զարգացման պլանների և ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ինչը կնպաստի ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ուսման որակի բարձրացման գործին:

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Ազիզյանը ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացրեց 2014 -2015 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

Արտահայտվեց - խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը

Նա հայտնեց, որ կատարված համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ ամբիոնների աշխատանքային պլանները՝ ըստ թեմատիկ և ժամանակագրական կառուցվածքի, համապատասխանում են ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին և հավանություն տալով ներկայացրեց քննարկման և հաստատման:

2014 – 2015 ուս. տարվա դեկանատի խորհրդի աշխատանքային պլանը ներկայացրեց դեկան Ն. Խուդավերդյանը , որպես դեկանատի խորհրդի նախագահ:

Արտահայտվեց - Հ. Մարգպանյանը

Նա նշեց, որ դեկանի կողմից ներկայացված դեկանատի խորհրդի պլանը արդեն իսկ խոսում է այն մասին, որ առաջնորդվելով դրանով, ֆակուլտետում կակընկալվի ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձր մակարդակ: Հավանություն տալով առաջարկեց այն հաստատել:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի կառուցվածքում գործող ամբիոնների և դեկանատի խորհրդի աշխատանքային պլանները:

4.Լսեցին - ընթացիկ հարցեր

1.2014 - 2015 ուս. տարվա դեկանատի խորհրդի կազմի քննարկման և հաստատման մասին:

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց դեկանատի խորհրդի նոր կազմը և առաջարկեց քննարկել և հաստատել:

1. Ն. Խուդավերդյան խորհրդի նախագահ
2. Գ. Առուշանյան խորհրդի քարտուղար
3. Պ. Ասիլբեկյան «Սերվիս» մասնագիտության խորհրդատու և ֆակուլտետի արհմիության նախագահ
4. Ա. Սարիբեկյան «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության խորհրդատու
5. Լ. Ալեքսանյան ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ
6. Հ. Քարտաշյան «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության առաջին կուրսի ավագ
7. Մ. Շահնազարյան «Սերվիս» մասնագիտության առաջին կուրսի ավագ

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի խորհրդի նախագահի կողմից ներկայացված դեկանատի խորհրդի կազմը:

2. *Ֆակուլտետի 2014 -2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ըստ մասնագիտությունների դասատախտակների քննարկման և հաստատման մասին:*

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2014 - 2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսումնական պրոցեսի կազմակերպման դասատախտակները, նշելով, որ այն կազմվել է համաձայն ֆակուլտետում գործող աշխատանքային ուսումնական պլանների նորմերի և դասախոսների անհատական ծանրաբեռնվածության տարեկան բաշխման պլանի:

Արտահայտվեցին - «Սերվիս» մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյանը և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության խորհրդատու Ա. Սարիբեկյանը:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2014 -2015 ուս. տարվա դասատախտակները:

3.Լսեցին - ֆակուլտետի մասնագիտությունների խորհրդատուների հաշվետվությունները

Լսեցին - սերվիս մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյյանին:

Նա նշեց, որ համաձայն 2014 - 2015 ուս. տարվա ուսումնական խորհրդատուների աշխատանքային պլանի իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- առաջին կուրսի ուսանողներին ծանոթացրել եմ կրեդիտային համակարգով ուսումնառության ձևին, մասնաճյուղի ներիքն կանոնակարգին և ուսանողների իրավունքներին ու պարտականություններին: Մասնագիտության բոլոր կուսերի ուսանողներին ներկայացրել եմ ամբիոնում հաստատված ուսումնական խորհրդատուների ժամանակացույցը՝ ըստ կուրսերի,
- պարբերաբար անց են կացվել ուսանողների հաճախումների ստուգում: Ընդհանուր առմամբ հաճախումները նորմալ է,
- օգնել եմ պայմանագրերի կնքման գործում / առաջին կուրսերին/: Ուսանողների ուշադրությանն ենք հրավիրել այնտեղ առկա պարտավորությունների կատարման ժամկետներին: Ինչ վերաբերվում է

կուրսային աշխատանքներին, ապա ուսանողներին բացատրվել է բակալավրի կրթական ծրագրով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքների կատարման և գնահատման կարգը: Հետևել ենք , որ ժամանակին ուսանողներին տրամադրվեն ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների հարցաշարերը,:

Լսեցին –տնտեսագիտություն մասնագիտության խորհրդատու Ա. Սարիբեկյան

Նա նշեց, որ ըստ խորհրդատուների խորհրդատվության ժամանակացույցի յուրաքանչյուր շաբաթ անցկացվում է խորհրդատուի ժամ: Կատարված աշխատանքներն են.

- պայմանագրերի կնքման և ստուգարքային գրքույկների տրամադրման կազմակերպում,
- առաջին կուրսի ուսանողներին ծանոթացրել եմ կրեդիտային համակարգով ուսումնառության ձևին, մասնաճյուղի ներիքն կանոնակարգին և ուսանողների իրավունքներին ու պարտականություններին: Մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողներին ներկայացրել եմ ամբիոնում հաստատված ուսումնական խորհրդատուների ժամանակացույցը՝ ըստ կուրսերի,
- պարբերաբար անց են կացրել ուսանողների հաճախումների ստուգում,
- մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողներին ներկայացրել եմ ամբիոնում հաստատված լրացուցիչ պարապմունքների ժամանակցույցը, այս աշխատանքում ընդգրկված են նաև բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ, որոնք օգնում են ակադեմիապես թույլ համակուրսեցիներին՝ պատրաստվելու քննաշրջանին, որը բարձրացնում է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների արդյունավետությունը, նպաստում ուսանողների գիտելիքների ավելացմանը,
- հետևել եմ, ժամանակին ուսանողներին տրամադրվեն ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների հարցաշարերը:

Որոշեցին - Խորհրդատուների հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատել բավարար և հանձնարարել ավելի արդյունավետ դարձնել խորհրդատուների աշխատանքը:

4. Լսեցին - դասընթացների բարելավման և աշխատանքային փաթեթների անցում կատարելու մասին:

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ելնելով մասնաճյուղի Ռազմավարական ծրագրի Բարձրորակ կրթության բաժնի 1/դ խնդրի պահանջներից և ներբուհական որակի ապահովման նկատմամբ պատասխանատվությունից՝ դասընթացների ծրագրերում և դասավանդման պրոցեսում ձեռք բերումների և զարգացման նպատակով անհրաժեշտ է 2014 – 2015 ուսումնական տարվա սկզբից մասնաճյուղի բոլոր ամբիոններում գործածության մեջ դնել դասընթացների աշխատանքային փաթեթներ /պորտֆոլիոներ/:/Հրաման № 72 «18 /

Ֆակուլտետտի երկու ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին նախօրոք տրամադրվել են Կրթության որակի ապահովման և գնահատման բաժինի կողմից մշակված փաթեթներին ներկայացվող հիմնական պահանջները և փաթեթների ձևավորաման ուղեցույցը:

Արտահայտվեցին - Հ. Մարզպանյանը և Հ. Ազիզյանը

Հ. Մարզպանյանը նշեց, որ այս հարցը քննարկվել է «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի թիվ 10 նիստում, ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը տեղյակ է դասընթացների փաթեթների պահանջներին և չափորոշիչներին:

Նա տեղեկացրեց, որ «Ընդհանուր տնտեսագիտության » ամբիոնի դասախոսներ Ա. Սարիբեկյանի և Գ. Ավետիսյանի դասընթացների աշխատանքային փաթեթները /պորտֆոլիոները/ պատրաստ են և գտնվում են ամբիոնում:

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Ազիզյանը նշեց, որ ամբիոնի ասիստենտներ Պ. Ասիլբեկյանի և Ա. Ուլիխանյանի պորտֆոլիոները պատրաստ են :

Երկու ամբիոնների վարիչները հավաստիացրին , որ մյուս մասնագետների պորտֆոլիոները մշակման ընթացքում են և պատրաստ կլինեն մինչև սեպտեմբերի վերջը:

Որոշեցին - Այս հարցին անդրադառնալ հաջորդ ֆակուլտետի խորհրդի նիստում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ